



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ  
ՓԱՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

ՀՀ Արմավիրի մարզ, Գ. Փարաքար, Նաիրի 42, Հեռ. 0231 6-00-42, 060-53-00-42

N 2874  
22.12. 2022թ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ  
ՄԱՐԶՊԵՏ՝ ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Հովհաննիսյան,

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, Ձեզ է ուղարկվում ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի կողմից կազմակերպվող հողամասի աճուրդի վերաբերյալ տվյալները՝ մարզպետարանի պաշտոնական կայք էջում հրապարակելու համար:

Առդիր՝ 1 էլեկտրոնային ֆայլ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Է. ՄԻՆԱՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանը հայտարարում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի դասական աճուրդի:

ԼՈՏ 1 - ՀՀ Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի, Մուսալեռ գյուղի Տ. Անդրեասյան փողոց 4/4 հասցեում գտնվող՝ բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողեր գործառնական նշանակության, 04-069-0050-0106 կադաստրային ծածկագրով, 0,063 հա մակերեսով հողամասն օտարել աճուրդային եղանակով, որից 504.0 քմ մակերեսով հողամասը երկհարկանի բնակելի տուն կառուցելու, իսկ 126.0քմ մակերեսով հողամասը՝ սպասարկման նպատակով:

Հողամասի նկատմամբ սահմանափակումներ (ներառյալ սերվիտուտներ)՝ չկան: Առկա է ճանապարհ: Շրջակա միջավայրերի և պատմամշակութային հուշարձանների պահպանության, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումներ՝ չկան: Աճուրդի ծածկագիրն է՝ ՀԱ-02-22:

Աճուրդի առարկայի մեկնարկային գին է սահմանվել 6000000 /վեց միլիոն/ ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանում, ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գ. Փարաքար, Նաիրի 42:

Աճուրդին մասնակցելու իրավունք ունեն՝ ՀՀ քաղաքացիներն ու իրավաբանական անձինք և ՀՀ օրենսդրությամբ սահմանված հողի սեփականության իրավունքի այլ սուբյեկտներ և հողօգտագործողներ:

Աճուրդի նախավճարի չափը կազմում է աճուրդի առարկայի մեկնարկային գնի 50 տոկոսը: քայլի չափը՝ մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:


Աճուրդում հաղթող կճանաչվի առավելագույն գին առաջարկողը:

Աճուրդի պայմանների մանրամասներին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել՝ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարան /ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գ. Փարաքար, Նաիրի 42, 1-ին հարկ, քաղաքաշինության և հողաշինության բաժին/:

Աճուրդը կայանալու է 2023 թվականի հունվարի 25-ին ժամը 12:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի շենքի 2-րդ հարկում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2023 թվականի հունվարի 19-ը, ժամը 18:00-ը: Հեռ.՝ 0231-6-00-42 :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱԿԱՐ՝



ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ